

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

«ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2011 թվականի հոկտեմբերի 28-30-ը Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել էր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ջանքերով և ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ: Գիտաժողովը մի հարկի տակ էր հավաքել մասնագետների Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից, Իրանից, ԱՄՆ-ից:

Գիտաժողովի բացմանը ողջույնի խոսք ասացին պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Գիտության պետական կոմիտեի ներկայացուցիչ Լևոն Մարդոյանը, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Կարինե Աճեմյանը: Ներածական խոսքով հանդես եկավ ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ավանեսյանը: Նա խոսեց հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության և մեր հասարակության մեջ հոգեբանական գիտության և պրակտիկայի ոլորտում անելիքների և հեռանկարների մասին՝ ընդգծելով միջազգային համագործակցության կարևորությունը Հայաստանում հոգեբանությունն արդիականացնելու գործում:

Հայաստանից գիտաժողովի գործունե մասնակիցների շարքում էին մասնագետներ Երևանի պետական համալսարանից, Հայաստանի կառավարման ակադեմիայից, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանից, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանից, Հայ-ռուսական (սլավոնական) պետական համալսարանից, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանից, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտից, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի Ուրարտու համալսարանից, ինչպես նաև մի շարք հետազոտական և պրակտիկ կենտրոններից, ինչպիսիք են Հոգեկան առողջության հիմնադրամը, Դ. Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, Կանանց իրավունքների կենտրոնը, Վանաձորի հոգեբանական վերականգնման կենտրոնը ՀԿ-ն և այլն: Գիտաժողովին պատշաճ մասնակցություն ունեցան արտասահմանից հրավիրված բազմաթիվ մասնագետներ: Ձեկույցներով հանդես եկան ճանաչված, ինչպես նաև երիտասարդ գիտնականներ, ովքեր ներկայացնում էին Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը և Էկոնոմիկայի բարձրագույն դպրոցը, Մոսկվայի Մ. Լոմոնո-

սովի անվան պետական համալսարանը, Սամարայի սոցիալական և հումանիտար գիտությունների պետական ակադեմիան, Յարոսլավլի պետական համալսարանը, Կոստրոմայի պետական համալսարանը, Օդեսայի Մեչնիկովի անվան ազգային համալսարանը, Ֆրանսիական տրանս-միսիոն ասոցիացիան, Ավինյոնի համալսարանը, Սոցիալական աշխատանքի Փարիզի տարածքային ինստիտուտը, Ֆրանսիայի «REPERES» ինստիտուտը, Թբիլիսիի Ուզնաձեի անվան հոգեբանության ինստիտուտը, Բժշկական գիտությունների ռուսական ակադեմիան, ինչպես նաև ամերիկահայ, արգենտինահայ և իրանահայ անվանի հոգեբաններ:

Գիտաժողովը միավորում էր տարբեր թեմատիկ նստաշրջաններ (սիմպոզիումներ), այդ թվում՝ հոգեբանական հետազոտության տեսական և կիրառական հարցեր, անձի ուսումնասիրության նոր միտումներ, արտակարգ իրավիճակների, ճգնաժամերի և կոնֆլիկտների հոգեբանական հարցեր, սոցիալական ներազդման հիմնահարցեր, հոգեխորհրդատվության և հոգեշտկման արդի խնդիրներ, մասնագիտական գործունեության և կարիերայի հոգեբանական հարցեր և կրթության սոցիալ-հոգեբանական կողմեր: Պոստեր ներկայացման ձևաչափում իրենց հետազոտությունների արդյունքների ամփոփ զեկուցմամբ հանդես եկան հիմնականում երիտասարդ հոգեբաններ և՛ ՀՀ-ից, և՛ արտերկրներից: Ներկայացվեցին աշխատանքներ տարբեր մասնագիտական և սոցիալական միջավայրերում անձի նույնականության, զարգացման, ադապտացիայի, ինքնակարգավորման, քոֆինգ ռեսուրսների, մասնագիտական ռեսուրսների, հոգեբանական անվտանգության վերաբերյալ՝ մշակութային, ընտանեկան, կառավարման, թերապևտիկ, դատական, կրթական, արվեստի և այլ համատեքստերում: Նստաշրջանն անցավ աշխույժ մթնոլորտում և դարձավ գիտական բանավեճի դրսևորման յուրահատուկ ձև:

Այսպիսով, գիտաժողովում ծավալվեց լայն ընդգրկման տեսական և կիրառական հարցերի քննարկում՝ գիտակցության հիմնահարցերից մինչև կրեատիվության և ինովացիայի ժամանակակից հարցեր, բանակցության գործընթացի սոցիալ-հոգեբանական կողմերից մինչև անձի արժեքային կողմնորոշումներ, քաղաքական իմիջից մինչև մասնագիտական վերապատրաստման հոգեբանական ապահովում: Որոշ զեկույցներ հատուկ հետաքրքրություն էին ներկայացնում՝ առաջադրելով նոր հայեցակետեր և հարցադրումներ, ինչպիսիք են կոգնիտիվ անգիտակցականը, սպառողական վարքում որոշման կայացման՝ մինչ այդ քիչ քննարկված մեխանիզմներ, անձի մշակութային-արժեքային չափման արդի մեթոդաբանական կողմնորոշումներ:

Առանձին հիշատակման են արժանի արտերկրյա անվանի հոգեբանների ելույթները. վարքի ինտերակտիվ տեսության մեթոդաբանության շուրջ իր տեսակետն արտահայտեց Ուզնաձեի անվ. ինստիտուտի ղեկավար, վրաց հայտնի հոգեբան Ի. Իմեդաձեն, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի պրոֆեսոր Վ. Ալախվերդովը նորովի մեկնաբանեց գիտակցության հիմնահարցը, Սանկտ Պետերբուրգի համալսարանի հոգեբանության ֆակուլտետի ղեկան Ա. Շաբուտասը ներկայացրեց ֆակուլտե-

տի գիտական աշխատանքների ներկայիս հիմնական ուղղությունները՝ պատրաստակամություն հայտնելով միջազգային համագործակցության:

Գիտաժողովի հրատարակված նյութերից տեղեկանում ենք, որ Մ. Գարագաշյանը (ԱՄՆ) քննարկել է աղետների մշակութային-հոգեբանական հետևանքների ուսումնասիրման մեթոդաբանական խնդիրներ, Ժակ Դրուլոն (Ֆրանսիա) յուրահատուկ, ոչ միանշանակ տեսակետ է ներկայացրել կրթական համակարգում հոգեբանական բռնության և դասավանդողի մարդասիրության հարցի շուրջ, Ֆրանսահայ հոգեբան Զ. Ալեքսանյանն անդրադարձել է Հայաստանում կանանց նկատմամբ դրսևորվող բռնության հոգեբանական սկզբնաղբյուրների և հետևանքների հարցին:

Գիտաժողովը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում երկու տարին մեկ կազմակերպվող միջազգային գիտաժողովների ավանդույթի հերթական արտահայտությունն էր, որն այս անգամ աչքի ընկավ իր բովանդակային և կազմակերպական նոր որակով: Այն հիանալի հարթակ էր հետխորհրդային երկրների հոգեբան-մասնագետների հետ համագործակցության հեռանկարների և համատեղ կոնկրետ ծրագրերի առարկայական քննարկումների համար: Ակնհայտ դարձան ընդհանուր մտահոգություններն ու անելիքները, ուրվագծվեցին հնարավոր համատեղ նախաձեռնությունները հատկապես հետազոտությունների և կրթական ծրագրերի ոլորտում: Իրենց ամփոփիչ խոսքում թե՛ կազմակերպիչները, թե՛ հյուրերը բարձր գնահատեցին գիտաժողովի առաքելությունը, կարևորեցին տարածաշրջանային, մշակութային, հասարակական-քաղաքական հարցերում հոգեբանների համագործակցության և հոգեբանական գիտելիքի ներդրման անհրաժեշտությունը, հոգեբանության մեթոդաբանական արդիականացման կարիքի գիտակցումը: Հյուրերը խորին գոհունակություն հայտնեցին նաև կազմակերպված մշակութային հագեցած ծրագրի համար:

Որպես հոգեբանական դպրոցների հայ-վրացական համագործակցությանը նպաստող նախաձեռնության գնահատում՝ Զ. Մ. Ավանեսյանն արժանացավ Դ. Ուզնաձեի պատվո շքանշանին:

Գիտաժողովը նաև առիթ հանդիսացավ հայ հոգեբանների միավորման համար: Տեղի ունեցավ «Հոգեբանների հայկական գիտական միավորման» հիմնադիր ժողովը, որի ընթացքում հաստատվեց հասարակական կազմակերպության կանոնադրությունը, Հայաստանի բուհերի առաջատար մասնագետներից ձևավորվեց խորհրդի կազմը, և նախագահ ընտրվեց Զ. Մ. Ավանեսյանը:

Սոնա ՄԱՆՈՒՄՅԱՆ